ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«18» մայիսի 2017 թվականի№ 51-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 50 ՏՈԿՈՍ ԵՎ ԱՎԵԼԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 66-րդ և 67-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) 50 տոկոս և ավելի պետական բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների 2016 թվականի տարեկան գործունեության արդյունքների քննարկման նպատակով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Հայկական ատոմային էլեկտրակայան», «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր», «Հաշվարկային կենտրոն», «Բարձրավոլտ էլեկտրացանցեր», «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն», «Հայատոմ», «Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ»,

«Էներգաիմպեքս», «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համակարգ» (լիազորագրի առկայությամբ) փակ բաժնետիրական ընկերությունների խորհուրդների նախագահներին.

ղեկավարվելով օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի «բ», «գ», և «դ» կետերով, օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ապահովել ընկերությունների տարեկան ընդհանուր ժողովների նախապատրաստումը և գումարումը:

2. Ղեկավարվելով Օրենքի 83-րդ հոդվածի 1-ին մասով «Էներգակարգաբերում», «Անալիտիկ», «Ռադիոակտիվ թափոնների վնասազերծում», «Նաիրիտ-2» փակ բաժնետիրական ընկերություններում սույն թվականի հունիսի 6-ին համապատասխանաբար՝ ժամը 11^{00}, 11^{30}, 12, 12^{30} (ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական շենք 3, 7-րդ հարկ, խորհրդակցությունների դահլիճ) գումարել ընկերությունների 2016 թվականի տարեկան ընդհանուր ժողովներ և հաստատել վերը նշված ընկերություններից յուրաքանչյուրի տարեկան ընդհանուր ժողովի օրակարգը՝ հետևյալ հարցերով.

1) 2016 թվականի տարեկան ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվության հաստատում.

2) վերստուգողի (աուդիտի) եզրակացության ներկայացում.

3) 2016 թվականի տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատում.

4) 2016 թվականի տարեկան շահույթի (վնասի) հաշվի հաստատում.

5) 2016 թվականի տարեկան շահույթի բաշխման և շահույթաբաժինների վճարման չափի հաստատում:

3. Ընկերությունների գլխավոր տնօրեններին.

ապահովել ընկերությունների տարեկան ընդհանուր ժողովներում քննարկվելիք հարցերով համապատասխան փաստաթղթերի ներկայացումը Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն՝ 2012 թվականի հունվարի 26-ի թիվ 03/13/231-12 գրությամբ պահանջված տեղեկատվության ներառմամբ:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ